Քարտերի տրամադրման և օգտագործման կանոններ

1. ***Սահմանումներ.***

1.1. Բանկ - «Կոնվերս Բանկ» ՓԲԸ:

1.2. Վճարահաշվարկային համակարգ - Բանկի հետ համագործակցող վճարահաշվարկային կազմակերպության կողմից սահմանված և մշակված ընդհանուր կանոնների, ընթացակարգերի և վերջիններս ապահովող տեխնիկածրագրային միջոցների ամբողջություն, որոնց ներքո Բանկն իրականացնում է քարտերի թողարկում, սպասարկում և/կամ քարտերի ընդունում որպես վճարային միջոց: Բանկի կողմից թողարկվում և սպասարկվում են հետևյալ վճարահաշվարկային համակարգերի քարտերը՝ Visa, Mastercard, UnionPay և ԱրՔա (ArCa):

1.3. Քարտ/եր/ - Բանկի մասնակցությամբ Վճարահաշվարկային համակարգերի ներքո թողարկվող վճարային քարտեր, որոնց միջոցով Քարտապանը կարող է տվյալ ծառայության/քարտատեսակի համար սահմանված պայմաններին և դրույթներին համապատասխան դրամական միջոցներ ելքագրել և մուտքագրել Քարտային հաշվին, փոխանցումներ և վճարումներ իրականացնել Վճարային սահմանաչափի սահմաններում՝ տվյալ Վճարահաշվարկային համակարգի Քարտերը սպասարկող կանխիկացման կամ առևտրի և սպասարկման կետերում: Քարտը հանդիսանում է Բանկի սեփականությունը:

1.4. Կանոններ - Քարտերի տրամադրման և օգտագործման սույն կանոնները:

1.5. PIN ծածկագիր կամ PIN կոդ - անհատական նույնականացնող համար (Personal Identification Number - PIN), որը կիրառվում է որոշակի գործառնությունների կամ գործարքների դեպքում Քարտապանին նույնականացնելու համար:

1.6. Պայմանագիր - Վճարային քարտի տրամադրման, սպասարկման, օգտագործման, պայմանագիր/պայմանագրի կնքման՝ Քարտապանի կողմից ակցեպտավորված առաջարկ/օֆերտա:

1.7. Քարտապան - Բանկի հետ կնքված Պայմանագրի հիման վրա Քարտն օգտագործելու իրավունք ունեցող անձ:

1.8. Հաշվետեր քարտապան - Պայմանագրի կողմ հանդիսացող և Քարտն օգտագործելու իրավունք ունեցող անձ:

1.9. Քարտային հաշիվ – Քարտապանի անունով Բանկում բացված հաշիվ, որում առկա դրամական միջոցները կարող են տնօրինվել նաև Քարտի կիրառմամբ:

1.10. Վարկային սահմանաչափ - Բանկի կողմից Քարտապանին տրամադրված վարկային գիծ/օվերդրաֆտ (համաձայն կնքվող առանձին պայմանագրի), որը կարող է օգտագործվել Քարտով/Քարտային հաշվով գործառնությունների կամ գործարքների համար:

1.11. Վճարային սահմանաչափ - Քարտային հաշվի մնացորդի և Վարկային սահմանաչափի հանրագումարը, որից Քարտապանը կարող է օգտվել:

1.12. Գործառնություն կամ Գործարք Քարտով – գործառնություն կամ գործարք, որում Քարտն օգտագործվում է ապրանքների և ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու, կանխիկի ստացման կամ փոխանցումներ կատարելու համար:

1.13. Գործարքի կատարման օր - Քարտով Գործարքը կատարելու փաստացի օր:

1.14. Գործարքի հաշվառման օր - Քարտը սպասարկող Վճարահաշվարկային համակարգի կողմից Գործարքը Բանկի հաշվառմանը ներկայացնելու հիմքով Բանկում Քարտապանի Քարտային հաշվին Գործարքը հաշվառելու օր:

1.15. Առևտրի/սպասարկման կետ - ապրանքների վաճառքի/ծառայությունների մատուցման կետ, այդ թվում՝ ինտերնետ միջավայրում, որի կողմից վաճառվող ապրանքների/մատուցվող ծառայությունների դիմաց հնարավոր է վճարել Քարտի միջոցով:

1.16. Ավտոմատ գանձման մեքենա (այսուհետ՝ Բանկոմատ) - գրասենյակային կամ արտաքին օգտագործման համար նախատեսված՝ ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ ինքնասպասարկող սարք:

1.17. Հավաստագրում - Քարտով Գործարքի կատարման համար Բանկի կողմից տրվող թույլտվություն կամ հաստատում:

1.18. Ժամկետի ավարտ - Քարտի վրա նշված ամսվա վերջին օրվա ժամը 24:00-ն:

1.19. Գերածախս - առանձին դեպքերում, կախված Քարտի օգտագործման վայրից և գործարքի բնույթից, Քարտի Վճարային սահմանաչափի գերազանցում մեկ կամ մի քանի Գործարքների արդյունքում: Գերածախսված գումարի նկատմամբ հաշվարկվում է տույժ՝ Բանկի սակագներով և դրույքներով սահմանված չափերով:

1.20. Կից քարտ - նույն Քարտային հաշվի ներքո տրամադրված լրացուցիչ քարտ:

1.21. PRIORITY PASS անցաքարտ - Բանկի կողմից թողարկված Visa Platinum/Visa Signature/Visa Infinite Քարտի հետ Քարտապանին տրամադրվող անցաքարտ, որի օգնությամբ Քարտապանը մուտք է գործում օդանավակայանների բարձրակարգ սպասարկման սրահներ:

1.22. Օֆլայն ռեժիմում կատարված Գործարքներ - Գործարքներ, որոնք առցանց (online) Հավաստագրում չեն ստանում:

1.23. Դեբետային քարտ - Քարտ, որը նախատեսված է Քարտային հաշվին առկա՝ Քարտապանին պատկանող դրամական միջոցների սահմաններում կանխիկացման, ինչպես նաև՝ անկանխիկ գործառնություններ կամ գործարքներ իրականացնելու համար:

1.24. Հաշվարկային քարտ - Քարտ, որը նախատեսված է Քարտային հաշվին առկա՝ Քարտապանին պատկանող դրամական միջոցների և/կամ Բանկի կողմից տրամադրված վարկային գծի/օվերդրաֆտի սահմաններում կանխիկացման, ինչպես նաև՝ անկանխիկ գործառնություններ կամ գործարքներ իրականացնելու համար:

1.25. Վարկային քարտ - Քարտ, որը նախատեսված է Քարտապանին տրամադրված վարկային գծի սահմաններում կանխիկացման, ինչպես նաև՝ անկանխիկ գործառնություններ կամ իրականացնելու համար: Ընդ որում, Վարկային սահմանաչափի օգտագործած մասից ավելի մուտքագրված գումարները օգտագործվում են նույն կանոններով, ինչ Վարկային սահմանաչափից օգտագործվող գումարները:

1.26. Քարտի բլոկավորում - քարտի առցանց (online) Հավաստագրման դադարեցում/արգելափակում:

1.27. Քարտային հաշվի սառեցում - Քարտային հաշվով դեբետային/կրեդիտային գործառնությունների ամբողջական կամ մասնակի սահմանափակում:

1.28. 3D Secure համակարգ - «Verified by Visa», «MasterCard SecureCode», «UnionPay 3-D secure» և այլ անվտանգության համակարգեր, որոնք առցանց/էլեկտրոնային տիրույթում քարտային գործարքների Հավաստագրման ժամանակ ապահովում են երկգործոն նույնականացում: Բանկի կողմից թողարկվող քարտերը հագեցած են 3D Secure համակարգով:

1.29. 3D Secure անվտանգության գաղտնաբառ - առցանց/էլեկտրոնային տիրույթում Գործարքների Հավաստագրման համար Բանկի կողմից ուղարկվող մեկանգամյա գաղտնաբառ, որը Քարտապանը ստանում է Բանկին նախապես տրամադրված բջջային հեռախոսահամարին ուղարկվող SMS հաղորդագրության կամ էլեկտրոնային փոստին ուղարկված նամակի միջոցով:

1.30. Մեկանգամյա օգտագործման գաղտնաբառ (այսուհետ՝ OTP) - Քարտապանի՝ Բանկում գրանցված բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրությամբ ուղարկվող մեկանգամյա գաղտնաբառ, որը կիրառվում է Քարտապանի կողմից Բանկոմատի միջոցով Քարտի PIN կոդը ստեղծելու և Քարտն ակտիվացնելու, Քարտապանի կողմից ստեղծված Թոքենն ակտիվացնելու համար, ինչպես նաև այլ դեպքերում, որպես Քարտապանի նույնականացման ապահովման միջոց:

1.31. CVV/CVC կոդ - Քարտի հետնամասում նշված եռանիշ կոդ, որն օգտագործվում է առցանց/էլեկտրոնային տիրույթում Գործարքների կատարման ժամանակ:

1.32. Գաղտնաբառ - Քարտապանի անձը նույնականացնող ծածկագիր, որը կիրառվում է Քարտապանի կողմից Քարտի և Քարտային հաշվի վերաբերյալ տեղեկատվության ստացման, ինչպես նաև Բանկի կողմից սահմանված այլ դեպքերում (չշփոթել քարտի PIN ծածկագրի հետ):

1.33. Թոքենիզացում – Քարտի կցագրում էլեկտրոնային դրամապանակներին, որոնք տալիս են Թոքենով վճարման հնարավորություն:

1.34. Թոքեն – քարտի թվային համարժեքը, որը ստեղծվում է քարտի Թոքենիզացման արդյունքում: Թոքենիզացման գործընթացում Քարտապանի քարտի տվյալների անվտանգությունը երաշխավորված է Վճարահաշվարկային համակարգերի կողմից: Այն իրենից ներկայացնում է նշանների համադրություն, որին գաղտնագրված են Քարտի տվյալները: Թոքենով կատարված Գործարքի ժամանակ կտրոնի վրա արտացոլվում է Թոքենի համարի վերջին 4 նիշը:

1.35. Սակագներ – Բանկի ինտերնետային կայքում հրապարակված և/կամ Պայմանագրով սահմանված ծառայությունների սակագներ և դրույքներ:

2. *Քարտի տրամադրման/վերաթողարկման պայմաններ.*

2.1. Քարտային հաշիվը բացվում է Քարտով և Քարտային հաշվով գործառնություններ և գործարքներ իրականացնելու համար: Քարտը թողարկվում է Քարտային հաշվի ներքո:

2.2. Քարտի թողարկումից հետո՝ մեկամսյա ժամկետում, Քարտը չստանալու պարագայում Բանկն իրավունք ունի կատարել թողարկված Քարտի հետվերադարձ և Քարտի/Քարտային հաշվի փակում:

2.3. Քարտը հանդիսանում է Բանկի սեփականությունը:

2.4. Քարտը ստանալու պահին Քարտապանը պարտավոր է ստորագրել այն հակառակ կողմի ստորագրության դաշտում: Ստորագրության բացակայությունը կամ դրա անհամապատասխանությունը՝ Քարտապանի կողմից ներկայացված և ստորագրության նմուշ պարունակող Քարտապանի անձը հաստատող փաստաթղթին, հանդիսանում է օրինական հիմք Քարտի սպասարկումը մերժելու, ինչպես նաև այն առգրավելու համար՝ առանց որևէ փոխհատուցման:

2.5. Քարտով հետևյալ Գործարքների կատարման ժամանակ անհրաժեշտ է PIN ծածկագիր.

- Բանկոմատներից կանխիկ գումարների ստացում,

- POS տերմինալներով ոչ անհպում Գործարքների կատարում,
- POS տերմինալներով Վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված գումարային շեմից բարձր անհպում Գործարքների կատարում:

2.6. Նոր թողարկված/վերաթողարկված քարտի PIN ծածկագիրը սահմանվում է հետևյալ եղանակներից մեկով.

- Հաճախորդի կողմից Converse Mobile հավելվածով (այսուհետ՝ Հավելված) համապատասխան Քարտի կարգավորումներից՝ հետևելով Հավելվածի քայլերի հաջորդականությամբ սահմանված հրահանգներին, ինչից հետո նոր Քարտն ակտիվանում է և կարող է օգտագործվել Գործարքներ կատարելու համար:
- Հաճախորդի կողմից ԱՐՔԱ համակարգի անդամ բանկերի բանկոմատների միջոցով՝ OTP կոդի կիրառմամբ: Այս դեպքում անհրաժեշտ է հետևել բանկոմատի էկրանին հայտնվող հրահանգներին՝ ստացված OTP-ն մուտքագրելով համապատասխան դաշտում և այնուհետև սահմանելով PIN ծածկագիրը, ինչից հետո նոր Քարտն ակտիվանում է և կարող է օգտագործվել Գործարքներ կատարելու նպատակով: Սահմանված ժամկետում OTP-ն չստանալու դեպքում, Քարտապանը պետք է դիմի Բանկին:
- Քարտապանի ցանկությամբ՝ նախապես սահմանված PIN ծածկագրի թողարկմամբ, որի դեպքում Քարտի հետ տրամադրվում է Քարտի PIN ծածկագիրը պարունակող ծրար: Ընդ որում այս դեպքում PIN ծածկագիրը տպագրվում է մեկ օրինակով և փակ ծրարով տրամադրվում է Քարտապանին, իսկ Քարտի ակտիվացումը կատարվում է Բանկի կողմից Քարտի տրամադրման հաստատումից հետո:

2.6.1. Քարտի նոր PIN ծածկագիրը սահմանելիս նախընտրելի է չօգտագործել իրար հաջորդող կամ կրկնվող թվեր՝ կիրառելով թվային բարդ համադրություն:

2.6.2. Քարտի PIN ծածկագրի պահպանման պատասխանատվությունը կրում է Քարտապանը:

2.6.3. Քարտապանը կարող է իր հայեցողությամբ փոխել PIN ծածկագիրը Հավելվածի միջոցով համապատասխան Քարտի կարգավորումներից կամ համապատասխան հնարավորությամբ բանկոմատի միջոցով՝ հետևելով սահմանված քայլերի հաջորդականությանը:

2.6.4. Քարտի PIN ծածկագիրը մոռանալու/կորցնելու դեպքում Քարտապանը կարող է սահմանել նոր PIN ծածկագիր Հավելվածով կամ դիմել Բանկ վերականգնելու (reset) PIN ծածկագիրը, ինչից հետո նոր PIN ծածկագիրը հնարավոր է սահմանել 2.6. կետով սահմանված եղանակներով: Բանկը կարող է նաև Քարտապանի դիմումի համաձայն վերաթողարկել Քարտը նոր PIN ծածկագրով՝ Սակագներով սահմանված լինելու դեպքում գանձելով համապատասխան վճարը:

2.6.5. Հավելվածով PIN ծածկագիրը սահմանելու դեպքում POS տերմինալներով Քարտի կիրառմամբ ոչ անհպում գործարքներ հնարավոր է կատարել Քարտն ԱրՔա համակարգի անդամ որևէ բանկի բանկոմատում օգտագործելուց հետո:

2.6.6. Երեք անգամ անընդմեջ սխալ PIN ծածկագիր հավաքելու դեպքում Քարտն ավտոմատ բլոկավորվում է և/կամ կարող է առգրավվել:

2.7. Բանկը, մինչև Դեբետային քարտի Ժամկետի ավարտը՝ Ժամկետի ավարտին նախորդող վերջին 15 օրերի ընթացքում, առանց Քարտապանի լրացուցիչ համաձայնության կարող է վերաթողարկել Քարտը՝ այդ պահին Բանկի կողմից սահմանված Քարտի գործողության ժամկետով՝ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պայմաններին բավարարելու դեպքում:

2.8. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պայմաններին չբավարարելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Քարտապանը Դեբետային քարտի Ժամկետի ավարտից առնվազն 15 օր առաջ գրավոր հայտնել է Քարտից հրաժարվելու մասին, Ժամկետի ավարտի պահից Քարտը ճանաչվում է անվավեր և Ժամկետի ավարտից 5 օրվա ընթացքում այն ենթակա է վերադարձման Բանկ կամ պետք է ոչնչացվի Քարտապանի կողմից (Քարտն անհրաժեշտ է կտրատել մանր կտորների, որպեսզի տվյալները դառնան անընթեռնելի), ինչը չկատարելու արդյունքում հնարավոր բացասական հետևանքների պատասխանատվությունը կրում է Քարտապանը:

2.9. Սոցիալական ապահովության հաշիվների ներքո թողարկված «Թոշակ» Քարտերի դեպքում վերաթողարկումը կատարվում է Քարտապանի կողմից ներկայացրած վերաթողարկման դիմումի հիման վրա:

2.10. Հաշվարկային քարտերի վերաթողարկումը կատարվում է Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պայմաններին բավարարելու դեպքում:

2.11. Քարտապանը պարտավոր է միջոցներ ձեռնարկել Քարտի անվտանգությունն ապահովելու, Քարտի տվյալները երրորդ անձանց հասանելի չդարձնելու և դրա անթույլատրելի օգտագործումը բացառելու համար:

3. ***Կից քարտ.***

3.1. Հաշվետեր Քարտապանից ստացված հայտի հիման վրա Բանկը կարող է թողարկել մեկ կամ մի քանի Կից քարտ՝ Հաշվետեր Քարտապանի կողմից նախապես նշված անձանց անունով: Այս դեպքում Հաշվետեր Քարտապանը Բանկին պետք է տրամադրի Կից Քարտապանների վերաբերյալ հավաստի տեղեկություններ:

3.2. Կից Քարտը կարող է օգտագործվել միայն այն անձի կողմից, ում անունով այն թողարկվել է:

3.3. Հաշվետեր Քարտապանը պարտավոր է ծանոթացնել Կից Քարտապանին՝ Կանոններին և Պայմանագրի հիմնական դրույթներին:

3.4. Կից քարտերի վրա տարածվում են Կանոնները, ինչպես նաև Քարտերի և քարտային գործառնությունների վերաբերյալ Բանկում գործող բոլոր նորմատիվ և իրավական ակտերի դրույթները:

3.5. Կից քարտով Գործարքները կատարվում են Վճարային սահմանաչափի շրջանակներում և արտացոլվում են Քարտային հաշվի քաղվածքում՝ համաձայն Կանոնների, ընդ որում՝ Հաշվետեր Քարտապանի կողմից կարող է սահմանվել Կից քարտի գործարքների/գումարների ամսական սահմանաչափ կամ այլ սահմանափակում:

3.6. Քարտի փակման դեպքում փակվում են նաև Կից քարտերը:

3.7. Կից Քարտապանի կողմից կատարված Գործարքների, այդ թվում՝ Գերածախսի համար պատասխանատվությունը կրում է Հաշվետեր Քարտապանը:

4. ***Քարտի օգտագործում.***

4.1. Քարտապանն իրավունք չունի փոխանցել Քարտը և PIN ծածկագիրն այլ անձանց:

4.2. Արգելվում է գրել PIN ծածկագիրը քարտի վրա:

4.3. Ինտերնետ միջավայրում Գործարքների իրականացման դեպքում PIN ծածկագրի մուտքագրում չի պահանջվում, և նախատեսված չէ որևէ Վճարահաշվարկային համակարգի կողմից, ուստի արգելվում է տվյալ տիրույթներում մուտքագրել PIN ծածկագիրը: Մուտքագրելու/հայտնելու դեպքում անհրաժեշտ է անմիջապես դադարեցնել Գործարքը, տեղեկացնել Բանկին և բլոկավորել Քարտը:

4.4. Քարտն օգտագործելիս՝ անհրաժեշտ է PIN ծածկագիրը մուտքագրել այնպես, որ տեսանելի չլինի երրորդ անձանց և չտեսաձայնագրվի որևէ սարքի միջոցով:

4.5. Քարտով առևտրի և սպասարկման կետերում վճարում կատարելու կամ կանխիկացման կետերում կանխիկ գումար ստանալու դեպքերում Քարտապանից կարող է պահանջվել ստորագրել կտրոնը/անդորրագիրը՝ ստուգելով Գործարքի գումարը:

4.6. Քարտով անհպում Գործարքների դեպքում Վճարահաշվարկային համակարգերի կողմից կարող են սահմանվել սահմանաչափեր, որոնք չգերազանցելու դեպքում PIN ծածկագրի մուտքագրում չի պահանջվում:

4.7. Բանկն իր Սակագներով սահմանում է քարտով մեկ օրվա ընթացքում կանխիկի ստացման և/կամ անկանխիկ Գործարքների քանակային և գումարային սահմանաչափեր: Այս սահմանաչափերը կարող են փոփոխվել Քարտապանի կողմից Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և չափով Հավելվածի միջոցով կամ դիմելով Բանկին:

4.8. Գործարքի գումարը համարվում է ելքագրված Քարտային հաշվից Գործարքի հաշվառման օրը: Գործարքը, կախված առևտրի/սպասարկման կետի և Գործարքի տեսակից, կարող է հաշվառվել մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում: Գործարքի գումարը Քարտից ելքագրվում է անմիջապես, իսկ Քարտային հաշվում հաշվառվում է, ինչպես նաև Քարտային հաշվի քաղվածքում արտացոլվում է, որպես կանոն, հետևյալ ժամկետներում՝

- ԱՐՔԱ համակարգում կատարված Գործարքների դեպքում՝ հաջորդ աշխատանքային օրը,
- ԱՐՔԱ համակարգից դուրս կատարված Գործարքների դեպքում, որպես կանոն, 2-3 աշխատանքային օր հետո:

4.9. Քարտապանը կարող է անձամբ կամ, իր հանձնարարությամբ, երրորդ անձի միջոցով Քարտային հաշվին անկանխիկ կամ կանխիկ միջոցներ մուտքագրել: Միջոցների մուտքագրումը կարող է կատարվել նաև այլ եղանակներով, ներառյալ՝ այլ բանկերի, այդ թվում՝ արտասահմանյան թղթակից բանկերի միջոցով:

4.10. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտապանի կրած այն հնարավոր վնասների համար, որոնք կարող են առաջանալ գումարը Քարտապանի Քարտին ժամանակային խզումով կամ ուշացումով հասանելի դառնալու պատճառով: Մասնավորապես՝ ոչ Բանկի մեղքով առաջացած տեխնիկական կամ ծրագրային խնդիրների պատճառով, ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա առաջին 3 աշխատանքային օրը Գործարքների գումարները կարող են Քարտին հասանելի դառնալ սահմանված ժամկետներից ավելի ուշ:

4.11. Քարտային հաշվին միջոցները կարող են մուտքագրվել նաև Վճարահաշվարկային համակարգերի կողմից նախատեսված այլ տարբերակներով (քարտից քարտ փոխանցում, էլեկտրոնային դրամապանակից քարտին փոխանցում, բանկոմատի միջոցով գումարի մուտքագրում քարտին և այլն), որոնց դեպքում Քարտին փոխանցված գումարը կարող է հասանելի դառնալ անմիջապես կամ Վճարահաշվարկային համակարգերի կողմից տվյալ գումարի մուտքագրման եղանակի համար նախատեսված ժամանակահատվածում: Քարտային հաշվին գումարների մուտքագրման դեպքում գումարը համարվում է մուտքագրված տվյալ Գործարքի հաշվառման օրը:

4.12. Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով Գործարքների դեպքում Հավաստագրման և փաստացի հաշվառման ժամանակ կիրառվող փոխարժեքները կարող են տարբերվել: Գործարքի Հավաստագրման ժամանակ կիրառվում են համապատասխան Վճարահաշվարկային համակարգի կողմից սահմանված փոխարժեքները, իսկ Գործարքի հաշվառման ժամանակ կիրառվում են Բանկի կողմից Գործարքի հաշառմանը նախորդող բանկային օրվա ավարտի համար սահմանված համապատասխան փոխարժեքները: Visa քարտերով ԱՄՆ դոլարից և Եվրոյից, իսկ այլ քարտերով՝ ԱՄՆ դոլարից տարբերվող արժույթով միջազգային (ՀՀ սահմաններից դուրս և/կամ օտարերկրյա բանկի կողմից սպասարկվող առևտրի կետերում) Գործարքների դեպքում կատարվում է Գործարքի արժույթից փոխանակում ԱՄՆ դոլարի՝ Վճարահաշվարկային համակարգի կողմից սահմանված

փոխարժեքով, և ԱՄՆ դոլարից Գործարքի գումարի փոխանակում քարտային հաշվի արժույթի՝ Բանկի կողմից՝ Գործարքի հաշառման օրվան նախորդող բանկային օրվա ավարտի համար սահմանված համապատասխան փոխարժեքով: Այս գործարքների դեպքում Բանկի կողմից Սակագներով կարող է սահմանվել և կիրառվել համապատասխան միջնորդավճար, որը հասանելի է Բանկի պաշտոնական կայքում: Փոխարժեքների տարբերության հետ կապված արժութային և այլ ռիսկերի համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

4.13. Հաճախորդի Քարտային հաշվից Բանկի ծրագրերի տեխնիկական կամ կապի խափանման հետևանքով, ինչպես նաև Բանկի աշխատակիցների մեղքով ավելի գանձված կամ կրկնակի գանձված գումարները վերադարձվում են հաճախորդի Քարտային հաշվին՝ խնդիրը Բանկին հայտնի դառնալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:

4.14. Կանոններն ու Սակագները պարունակում են Բանկի կողմից Քարտերի տրամադրման և սպասարկման հետ կապված հարաբերությունները կարգավորող դրույթներ: Այդուհանդերձ, Վճարահաշվարկային համակարգերը կարող են ունենալ Քարտի կոնկրետ տեսակներով Գործարքների իրականացման հատուկ սահմանաչափեր և այլ կանոններ, որոնք նույնպես ենթակա են պահպանման Բանկի և Քարտապանի կողմից, և որոնց չպահպանման հետևանքով Քարտապանի կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

4.15. Քարտը չի կարող օգտագործվել որևէ անօրինական գործունեության կամ դրանից բխող Գործարքների համար: Քարտային Գործարքների օրինականության շուրջ որևէ կասկածի առկայության դեպքում Բանկն իրավունք ունի առանց Քարտապանին ծանուցելու չթույլատրել Գործարքը և/կամ բլոկավորել Քարտը և/կամ սառեցնել հաշիվը: Բանկը կարող է նաև լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր պահանջել Քարտապանից՝ նախքան համապատասխան Գործարքի թույլատրումը:

4.16. Նախքան Քարտով առցանց/էլեկտրոնային տիրույթում Գործարք իրականացնելը՝ Քարտապանը պետք է մանրամասն ծանոթանա տվյալ տիրույթում բաժանորդագրության, գնումների կատարման, առաքման, Գործարքի չեղյալացման, ապրանքների վերադարձման պայմաններին, ինպես նաև հաճախորդների աջակցման կենտրոնի հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ կոնտակտային տվյալների առկայությանը:

4.17. Առցանց/էլեկտրոնային տիրույթում Գործարք կատարելիս՝ Քարտապանը պետք է օգտվի ճանաչված և հուսալի կայքերից, էլեկտրոնային դրամապանակներից և հավելվածներից, որոնք ապահովված են ժամանակակից անվտանգության միջոցներով, ինչպիսիք են Secure Sockets Layer (SSL) սերտիֆիկատ, «Verified by Visa», «MasterCard SecureCode», «UnionPay 3-D secure» և այլ անվտանգության համակարգեր: Տեխնիկական կամ Բանկի գործունեությամբ չպայմանավորված որևէ պատճառով 3D Secure անվտանգության գաղտնաբառ չստանալու և դրա արդյունքում Գործարքը խափանվելու դեպքում Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

4.18. Խորհուրդ չի տրվում օգտվել այն բանկոմատներից, կանխիկացման և առևտրի/սպասարկման կետերից և սարքավորումներից, որոնց քարտ ընթերցող սարքին, ստեղնաշարին կամ կանխիկի տրամադրման պատուհանին միացված են լրացուցիչ սարքավորումներ, հաղորդալարեր, կպչուն ժապավեններ և այլ կասկածելի իրեր, եթե Քարտապանի կարծիքով վստահելի չեն կամ կասկած են առաջացնում:

4.19. Քարտապանը, քաղվածքի ձևավորման պահից՝ 3 ամսվա ընթացքում (եթե ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ համապատասխան Վճարահաշվարկային համակարգի կանոններով), կարող է բողոքարկել քաղվածքում արտացոլված գործարքները՝ Բանկի կողմից սահմանված ձևով լրացված հայտով՝ դրան կցելով իր բողոքը հիմնավորող փաստաթղթերը: Խորհուրդ է տրվում որևէ անհամապատասխանության կամ չարտոնված գործարք նկատելու դեպքում անմիջապես տեղեկացնել Բանկին:

4.20. Բանկը, Վճարահաշվարկային համակարգերի կանոններին համապատասխան, կօժանդակի Քարտապանի կողմից բողոքարկված գործարքի գումարի վերականգնմանը Քարտային հաշվին, սակայն գումարի վերականգնման անհնարինության դեպքում Քարտապանը չի ազատվում Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորություններից:

4.21. Քարտային գործարքների բողոքարկման պայմանները, ընթացակարգերն ու ժամկետները սահմանվում են Վճարահաշվարկային համակարգերի կողմից:

4.22. Բանկը, բողոքարկման հայտին ի պատասխան, 90 օրյա ժամկետում կամ վերականգնում է բողոքարկվող գործարքի գումարը քարտային հաշվին, կամ Քարտապանին տրամադրում է գրավոր պատասխան՝ գումարի վերադարձման անհնարինությունը հիմնավորելով: Առանձին դեպքերում, Քարտապանին պատշաճ ծանուցելով, հնարավոր է պատասխան գրությունը տրամադրվի կամ գումարը վերականգնվի սահմանված 90 օրյա ժամկետից ուշ՝ ելնելով Վճարահաշվարկային համակարգերի կանոններից կամ այլ չնախատեսված հանգամանքներից:

4.23. Անհրաժեշտ է պահպանել Քարտով Գործարքների հետ կապված բոլոր վճարային փաստաթղթերը մինչև Քարտային հաշվից քաղվածքի ստացումը, համեմատել քաղվածքում նշված Գործարքներն իրականում կատարված ծախսերի հետ և, անհամապատասխանությունների առկայության դեպքում, Կանոնների 4.19 կետում սահմանված ժամկետում հայտնել դրանց մասին Բանկին: Բանկն իրավունք ունի մերժել նշված ժամկետից ուշ ստացված բողոքները:

4.24. Քարտի գծով կարող է ձևավորվել Գերածախս՝ կախված Գործարքների որոշ տեսակների (հյուրանոցների ամրագրման գործարքներ, ավտովարձույթի սպասարկման կետերում կատարված գործարքներ, տուրիզմի և զվարճանքի ոլորտի սպասարկման կետերում կատարված գործարքներ և այլն) առանձնահատկություններից. սպասարկող բանկի կողմից Գործարքի ներկայացման ժամկետներից, ծրագրային խնդիրներից, սպասարկման կետի կողմից կատարված հետվճարներից/հետվերադարձերից, օֆլայն ռեժիմում կատարված Գործարքներից (որի դեպքում Գերածախսը կարող է առաջանալ նաև Քարտով դրամական միջոցների բացակայության դեպքում), Բանկի կողմից սահմանված միջնորդավճարներից, արտարժույթի փոխանակմամբ Գործարքներից և այլն:

4.25.Քարտով Գործարքները պետք է իրականացվեն Վճարային սահմանաչափի սահմաններում: Վճարային սահմանաչափը գերազանցելու դեպքում գանձվում է տույժ՝ սահմանաչափը գերազանցած գումարի նկատմամբ՝ համաձայն Սակագների և/կամ Պայմանագրի: Նշված դեպքում Քարտը կարող է բլոկավորվել մինչև պարտքի ամբողջական մարումը:

4.26. Պայմանագրի լուծման վերաբերյալ Քարտապանի գրավոր դիմումը ստանալու պահից՝ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, Բանկը դադարեցնում է Քարտի սպասարկումը՝ մարելով Բանկի հանդեպ Քարտապանի ունեցած և Քարտի սպասարկումը դադարեցնելուց 45-օրյա ժամկետի ընթացքում ձևավորված պարտավորությունները՝ Բանկում Քարտապանի ունեցած հաշիվներին առկա գումարներից: Սույն կետում սահմանված դեպքում Քարտային հաշվին առկա բացասական մնացորդը ենթակա է վճարման Քարտապանի կողմից բացասական մնացորդը ձևավորվելու պահից՝ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում:

4.27.Քարտի սպասարկման դադարեցման դեպքում Քարտապանը շարունակում է պարտավորություն և պատասխանատվություն կրել այն Գործարքների վճարման համար, որոնք կատարվել են նախքան Քարտի սպասարկման դադարեցումը և/կամ Քարտը Բանկին հանձնելը (ոչնչացնելը):

4.28. Բանկը պատասխանատվություն չի կրում որևէ բանկոմատում, կանխիկացման կամ առևտրի և սպասարկման կետում (այդ թվում՝ ինտերնետային միջավայրում գրանցված) Քարտի/գործողության ժամկետը լրացած Քարտի չսպասարկման կամ դրանց աշխատանքի խափանման հետևանքով Քարտապանին ուղղակի կամ անուղղակի հասցված վնասի համար:

4.29. Քարտի չլիազորված օգտագործման կամ նման օգտագործման վտանգի դեպքում Քարտապանը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել Բանկին Կանոնների 6-րդ կետում նշված եղանակներով ՝ խնդրելով սահմանափակել Քարտի օգտագործումը: Մինչ 6-րդ կետում նշված կարգով Բանկին ծանուցելու և ծանուցումը Բանկի կողմից հաստատվելու պահը՝ Քարտով կատարված Գործարքների հետևանքով Քարտապանին պատճառված վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

4.30. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտով կատարված այն Գործարքների հետևանքով պատճառված վնասների համար, որոնք իրականացվել են.

4.30.1.Միկրոպրոցեսորային (չիպային) քարտի միջոցով՝ PIN ծածկագրի մուտքագրմամբ:

4.30.2. Քարտի մագնիսական ժապավենի և/կամ Քարտի վրա տեղադրված չիպի ֆիզիկապես, և/կամ Քարտի հետնամասում նշված CVV2/CVC2 ծածկագրի ընթերցմամբ/մուտքագրմամբ և թողարկող բանկի կողմից օնլայն Հավաստագրմամբ (անգամ այն դեպքերում, եթե Գործարքի անդորրագրում առկա ստորագրությունը տարբեր է Քարտապանի փաստացի ստորագրությունից):

4.30.3. Օֆլայն ռեժիմում, եթե դրանք կատարվել են նախքան հաճախորդի կողմից Բանկին Քարտը վերադարձնելը և/կամ միջազգային բլոկավորման համակարգում տեղադրված չլինելու ժամանակահատվածում:

4.30.4. «3D Secure» Հավաստագրմամբ, ինչպես նաև «3D Secure» անվտանգության համակարգ ապահովող կայքերում, սակայն չեն ստացել 3D Secure Հավաստագրում:

4.31. Անհպում տարբերակով ընթերցմամբ Գործարքների հետ կապված Բանկի պատասխանատվությունը սահմանվում է ՀՀ ԿԲ խորհրդի 04.11.2014թ-ի թիվ 300-Ն որոշմամբ սահմանված կարգով:

4.32.Քարտը Բանկի կողմից տեղադրվում է միջազգային բլոկավորման համակարգում, եթե առկա է Քարտը արտասահմանյան երկրում չլիազորված օգտագործելու իրական վտանգ, որի դեպքում Քարտապանը պարտավոր է վճարել Սակագներով սահմանված միջազգային բլոկավորման համակարգում տեղադրման վճարը՝ անկախ քարտի բլոկավորված կամ փակված լինելու հանգամանքից:

4.33. Քարտապանը պատասխանատվություն չի կրում օֆլայն ռեժիմում կատարված այն Գործարքների համար, որոնք կատարվել են Քարտը միջազգային բլոկավորման համակարգում տեղադրված լինելու ժամանակահատվածում:

4.34. Ելնելով անվտանգության նկատառումներից՝ Բանկն իրավասու է արգելել կամ սահմանափակել առավել ռիսկային երկրներում Գործարքների կատարումը:

4.35. Ելնելով Քարտապանի շահերի պաշտպանության անհրաժեշտությունից՝ Քարտային հաշվով 6 (վեց) ամիս և ավելի շրջանառություն չլինելու դեպքում Բանկն իրավունք ունի միակողմանի սառեցնել Քարտային հաշիվը և բլոկավորել Քարտն՝ առանց այդ մասին Քարտապանին լրացուցիչ տեղեկացնելու, ինչը, սակայն, չի

սահմանափակում Բանկի իրավունքը Քարտային հաշվից գանձելու իր հանդեպ Քարտապանի ունեցած վճարային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով համապատասխան գումարները:

4.36. Բանկն իր նախաձեռնությամբ կարող է բլոկավորել Քարտը, իսկ Քարտային հաշիվը սառեցնել նաև հետևյալ դեպքերում, եթե.

4.36.1. Քարտի տվյալները (քարտի վերջնաժամկետը, CVV2/CVC2 ծածկագիրը) Գործարքի փորձի ժամանակ մի քանի անգամ սխալ է մուտքագրել,

4.36.2. Քարտապանը Բանկի նկատմամբ ունի ժամկետանց պարտավորություններ,

4.36.3. Քարտապանը ժամանակին չի կատարել Սակագներով սահմանված վճարումները,

4.36.4. պետական իրավասու մարմիններից ստացվել է բլոկավորման համապատասխան գրություն,

4.36.5. Բանկը, մոնիթորինգ իրականացնելիս, հայտնաբերել է զեղծարարական/խարդախության կասկած հարուցող Գործարքներ,

4.36.6. առանձին դեպքերում, Բանկն իրավասու է նաև սեփական նախաձեռնությամբ Քարտը տեղադրել միջազգային բլոկավորման համակարգում:

4.37.Բանկը կարող է Քարտը ապաբլոկավորել, իսկ Քարտային հաշիվը ապասառեցնել, եթե.

4.37.1. Քարտապանը մարել է ժամկետանց պարտավորությունները,

4.37.2. Քարտապանը վճարել է Սակագներով սահմանված վճարումները,

4.37.3. Պետական իրավասու մարմիններից ստացվել է ապաբլոկավորման համապատասխան գրություն,

4.37.4. Բանկն իր կողմից կատարված մոնիթորինգի ժամանակ հայտնաբերած կասկածելի զեղծարարական/խարդախության կասկած հարուցող Գործարքների գծով ստացել է բանավոր կամ գրավոր հաստատում Քարտապանի կողմից դրանց ոչ զեղծարարական լինելու վերաբերյալ:

4.38. Բանկը հնարավորություն է ընձեռում Քարտապանին ստանալ իր Քարտին կատարված մուտքերի և ելքերի վերաբերյալ SMS հաղորդագրություններ՝ այդպիսով հնարավորինս կանխելով Քարտի չլիազորված օգտագործումը: Այս ծառայության համար Բանկի Սակագներով կարող է սահմանվել համապատասխան միջնորդավճար:

4.39. Վերոնշյալ SMS հաղորդագրությունը ստանալուն պես՝ Քարտապանը պետք է հավաստիանա, որ Գործարքը կատարվել է իր կամ իր կողմից լիազորված անձի կողմից, գիտությամբ, կարգադրությամբ կամ մասնակցությամբ:

4.40. PRIORITY PASS անցաքարտի օգնությամբ օդանավակայանների բարձրակարգ սպասարկման սրահներ մուտքերի դիմաց գանձումները կատարվում են Քարտապանի Քարտային հաշվից՝ անակցեպտ կարգով, առանց Քարտապանի լրացուցիչ համաձայնությունը ստանալու: Քարտապանի Քարտային հաշվին միջոցների բացակայության դեպքում գանձումը կատարվում է Քարտապանի այլ հաշիվներից:

4.41. Բանկն իրավասու է Քարտապանից պահանջել Քարտի օգտագործման արդյունքում Քարտապանի մեղքով, ինչպես նաև Քարտի կորստի/գողացվելու դեպքում՝ մինչև Բանկին տեղեկացնելու պահը կատարված Գործարքների համար Վճարահաշվարկային համակարգերին Բանկի կողմից վճարված գումարները:

4.42. Բանկն իրավասու է որևէ կասկածի և/կամ անընդմեջ 3 անգամ գործարքի հավաստագրում չստանալու դեպքում դադարեցնել Քարտապանի բաժանորդագրությունը էլեկրոնային առևտրի և/կամ վիրտուալ սպասարկման կետերին (հարթակներին):

5. ***Թոքենի ստեղծում և օգտագործում.***

5.1. Բանկի կողմից թողարկված Visa և Mastercard միջազգային վճարահաշվարկային համակարգերի քարտերի համար հնարավոր է կատարել Թոքենիզացում:

5.2. Թոքեն հնարավոր է ստեղծել ինչպես Converse Mobile հավելվածի միջոցով, այնպես էլ առանձին էլեկտրոնային դրամապանակների միջոցով՝ մուտքագրելով անհրաժեշտ քարտային տվյալները, ակտիվացնելով ստեղծված Թոքենը OTP-ի միջոցով կամ զանգահարելով Բանկ 6.1 կետում նշված կապի միջոցներով:

5.3. Թոքենով հնարավոր է վճարումներ կատարել այն բոլոր առևտրի և սպասարկման կետերում և բանկոմատներում, որտեղ տեղադրված են Visa և Mastercard միջազգային վճարահաշվարկային համակարգերի քարտերով անհպում Գործարքների կատարման համար նախատեսված սարքավորումներ, և այն առցանց հարթակներում, որտեղ հնարավոր է վճարել տվյալ էլեկտրոնային դրամապանակում ստեղծված Թոքենով:

5.4. Թոքենով կատարված Գործարքները հավասարազոր են Քարտով կատարված Գործարքներին, որոնց վրա տարածվում են Կանոնները:

5.5. Թոքենով Գործարքները հնարավոր է իրականացնել բջջային հեռախոսով կամ այլ համապատասխան սարքավորմամբ (այսուհետ՝ Սարքավորում), որի վրա հասանելի է տվյալ էլեկտրոնային դրամապանակը: Ընդ որում Թոքենով Գործարք հնարավոր է կատարել Սարքավորմամբ սահմանված համապատասխան նույնականացումը անցնելուց/հաստատելուց հետո (գաղտնաբառ, մատնահետք, կենսաչափական այլ տվյալների կիրառմամբ հաստատում և այլն):

5.6. Թոքենով Գործարքի հետվերադարձի համար անհրաժեշտ է օգտագործել այն Սարքավորման էլեկտրոնային դրամապանակի Թոքենը, որով կատարվել է սկզբնական Գործարքը:

5.7. Քարտապանը ցանկացած պահի կարող է հեռացնել Թոքենը էլեկտրոնային դրամապանակից կամ կապ հաստատել Բանկի հետ՝ այն դադարեցնելու նպատակով: Թոքենի հեռացումը չի փոխում Քարտի կարգավիճակը:

5.8. Բլոկավորված/ոչ ակտիվ Քարտի համար հնարավոր չէ ստեղծել Թոքեն:

5.9. Visa և Mastercard միջազգային Վճարահաշվարկային համակարգերի կամ էլեկտրոնային դրամապանակների կողմից հնարավոր է սահմանվեն Թոքենով կատարվող գործարքների առավելագույն շեմեր: Նման դեպքերում Քարտապանը հնարավորություն ունի առավելագույն շեմը գերազանցող գումարի գործարքները կատարել Քարտով:

5.10. Քարտապանը պարտավոր է ապահովել Սարքավորման համար նույնականացման միջոցների գրանցման և պահպանման անվտանգությունը, և դրանք չփոխանցել երրորդ անձանց:

5.11. Քարտապանը չպետք է տրամադրի Թոքենի ակտիվացման համար ստացված OTP-ն երրորդ անձանց:

5.12. Սարքավորումը կորցնելու/գողացվելու, Թոքենի կիրառման համար տրամադրված գաղտնաբառերի՝ երրորդ անձանց հասանելի դառնալու, կամ որևէ այլ կերպ Թոքենից օգտվելու հնարավորության՝ երրորդ անձանց հասանելի դառնալու դեպքերում Թոքենի բլոկավորման նպատակով անհրաժեշտ է անհապաղ կապ հաստատել Բանկի հետ: Բանկին ժամանակին չտեղեկացնելու հետևանքով Քարտապանի կրած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

5.13. Սարքավորումը փոխարինելուց Քարտապանը պետք է համոզված լինի, որ փոխարինվող Սարքավորումներից Թոքեններն ապակցված են, կամ զանգահարի Բանկ՝ Թոքենների ապակցման վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով:

5.14. Քարտի փակման, ինչպես նաև սույն Կանոնների 4.36 կետով սահմանված՝ Բանկի կողմից Քարտի բլոկավորման դեպքերում Թոքենը նույնպես բլոկավորվում է: Մնացած բոլոր դեպքերում Թոքենը բլոկավորվում է միայն Քարտապանի կողմից Բանկ զանգահարելու կամ էլեկտրոնային դրամապանակից Թոքենը հեռացնելու միջոցով:

6. ***Քարտի/Թոքենի չլիազորված օգտագործում, կորուստ կամ գողացվելու դեպք.***

6.1. Քարտի/Սարքավորման կորստի, գողացվելու կամ չլիազորված օգտագործման դեպքում Քարտապանը պարտավոր է անմիջապես քայլեր ձեռնարկել դրանք բլոկավորելու համար, մասնավորապես դա հնարավոր է կատարել հետևյալ եղանակներով.

6.1.1. Քարտը բլոկավորել Հավելվածի միջոցով համապատասխան Քարտի կարգավորումներից:

6.1.2. Զանգահարել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (+37410) 511211, (+37412) 444444 շուրջօրյա հեռախոսահամարներով և ներկայացնել բանավոր դիմում, որի ստացումից և Քարտապանի ինքնությունը ճշտելուց հետո Քարտը բլոկավորվում է:

6.1.3. Զանգահարել Քարտի վրա նշված հեռախոսահամարով և ներկայացնել բանավոր դիմում, որի ստացումից և Քարտապանի ինքնությունը ճշտելուց հետո Քարտը բլոկավորվում է:

6.1.4. Ուղարկել պատշաճ գրավոր հաղորդագրություն card@conversebank.am էլ. հասցեով, Հավելվածի չատի միջոցով, Ինտերնետ Բանկ համակարգով կամ Բանկի ցանկացած մասնաճյուղում գրավոր դիմում ներկայացնելով:

Ընդ որում, Բանկը համարվում է Քարտապանի կողմից սույն կետով նշված միջոցներով ծանուցված՝ Բանկի կողմից Քարտապանի հաղորդագրության ստացման վերաբերյալ հավաստումը Քարտապանի կողմից ստանալու պահից:

6.2. Չլիազորված օգտագործման մասին տեղեկացումը ստանալու դեպքում Քարտն անմիջապես բլոկավորվում է, և Բանկը, Քարտապանի դիմումի հիման վրա, ուսումնասիրում է Գործարքի մանրամասները, անհրաժեշտության/հնարավորության դեպքում, սկսում Գործարքի բողոքարկման գործընթացը:

6.3. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի՝ Բանկին չտեղեկացնելու կամ ուշ տեղեկացնելու հետևանքով կրած վնասների համար:

6.4. Բլոկավորումից հետո կորցրած Քարտը հայտնաբերելու դեպքում այն ապաբլոկավորելու համար Քարտապանը կարող է դիմել Բանկին Հավելվածի միջոցով, ուղարկել պատշաճ գրավոր հաղորդագրություն սույն կետում նկարագրված եղանակներով կամ դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ, ընդ որումը քարտի ապաբլոկավորումը կատարվում է Քարտապանի պատշաճ նույնականացումից հետո:

6.5. Քարտի գործողությունը կարող է վերականգնվել բլոկավորումից հանելու համար Սակագներով սահմանված վճարները գանձելուց հետո (առկայության դեպքում):